

ԿԱՊԿԻՆ ՄՈՒՍԿԱՆ ԼԱՊՏԵՐԸ

Ձեզի կ'ըսեմ մատենագիրք, հեղինակք,
Որք միշտ վըսեմ եւ բարձր ոճով
Ամպերէն վար որոտալով
Կը գըրէք երգ եւ Արձակ.
Թէ հասկըցող ալ չըլլայ ձեր գըրածին.
Խընդրեմ գըրէք ուշ առակիս իմաստին: —

Մարդուն մէկն ունէր
Մոգական լապտեր.
Անկէ զատ ալ նորա տուն
Կապիկ մը կար շատ սիրուն.
Որով բազմութիւն
Ձէր պակսէր մարդուն,
Ապուղնայ էր կապիկն անուն,
Ինք լարախաղ ճարտար շարժուն.
Կը ցատըրտէր յոտն ի մատին կը խաղար,
Յանկարծ մեռեալ, լարին վրայ կ'երկընար:
Օր մը սորա տէրը գընաց գինետուն
— Անշուշտ այն օրը տօն մը կար,
Այլ ո՞ր սուրբին՝ միտքըս չիգար: —
Անտէր տան մէջ մընաց կապիկն իր գըլխուն,
Այլ սակայն ոչ անհոգ անգործ ու դատարկ,
Ձի այդ բանն էր նորա բնութեան հակառակ.
Ուստի ժողվեց տիրոջ տուն
Դուռ գըրացի, բազմութիւն:
« Մըտէք մըտէք, կը կանչէր մեր ապուղնան:
« Ձարմանալի նոր տեսարան
« Պիտի բանամ ես ձեր դիմաց.
« Ձուարճացիք որչափ ուզէք դուք անվարձ,
« Մըտնել ելնելու փող հարկաւոր չէ,
« Ըրածըս բոլոր ձեզի պատիւ է:
Հանդիսականք ամենեքեան
Իրենց աթոռը բազմեցան:
Մէջ տեղ բերուեցաւ մոգական լապտերն.
Աճապարեւելով փակուեցան փեղկերն.
Եւ բերնին տալով չըղլեփ՝¹ ապուղնան,
Շատ գովեստ զուրցեց լապտերին վրան.
Խօսք չէր ուզեր հեղինակին արուեստին
Միայն լըսողք յօրանջելով ծափ զարկին:
Շէն գոհ սըրտով ճարտար կապիկ,

¹ Շատխօս:

Առաւ ներկուն ապակին
Եւ յարմարցուց լապտերին :

« Սորա նըման տեսած ունի՞ք

« Աղուոր տեսարան ,
Կանչեց մեծաձայն .

« Նայեցէք , բարեկամք .

« Ահա ձեզ արեգակ

« Ճառագայթներն արձրկած ,

« Լուսապայծառ գեղապանծ :

« Ահաւասիկ ձեզ և լուսին

« Արծաթափայլ բոլորովին :

« Սոցա ետեւէն Ադամն ու Եւան ,

« Չորս դին կենդանիք եւ հաւք զանազան .

« Այս է ստեղծումն աշխարհի » : —

Հանդիսականք ամենայն

Թաղուած ի խոր գիշերի

Թաթերուն վըրայ ելած

Աչքերնին մեծ մեծ բացած ,

Լսածնին տեսնալ կ'ուզէին .

Բայց էր խաւար ամեն դին :

« Հաւատացէք , կանչեց կատուն անհամբեր ,

« Կամ իմ աչքերս բոլորովին են կուրցեր ,

« Կամ այդ կապիկը ցընորած

« Դուրս կու տայ բերնին եկած » : —

— « Ըսկիզբէն վեր , ես ալ , ասաց ,

« Բան չըտեսայ , Շունըն կատղած » : —

Իսկ հընդկահաւն հանդարտասէր ,

« Չէ , չէ , կըրկնեց , բաներ տեսնալ

« Շիտակն ըսեմ , կըրնայ ըլլալ ,

« Բայց եկ նայէ որ այդ բաներըն մէկմէկէ

« Զանազանեւ եւ որոշելըն դըժուար է » : —

Իսկ կիկերոնն անդադար

Վարդապետէր պերճաբար :

Մինչ մէկ փոքրիկ պակասութիւն

Պատճառ էր բան չտեսնուելուն .

Թէ հարցընես , — Արդեօք ի՞նչ էր . —

Լապտերին մէջ լոյս վառած չէր :

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ